

ճանեցուցին, որք եւ այժմ դեռ եւս² անյագութեամբ քինով³ ընդ մեռելոյն կագին:

173 Անարատ եւ յամենեցունց յարգելի⁴ յոյսն տէր Խոսրովիկ, չեւ եւս հասեալ ի սահմանս մեր, մինչդեռ գայր ի ճանապարհի, եւ լուան՝ որպէս ի վերայ թշնամոյ ընդդէմ զինեցան, ասելով. «Ահա ո՞ր գայ միւս եւս թարգմանն⁵»: 174 Եւ արհեսելոյն⁶ ի հեռաստանէ լուեալ զդռնչին մահաձայն աղեղանցն՝ աղաթեաց առ Բարձրեալն, եւ վաղվաղակի ընկալաւ զինդիրն. որում եւ տենչալի նշխարացն այլք, եւ ոչ մեք, արժանի եղեն⁷ ընդունակութեան:

175 Այլ ի դէպ համարիմ ընդ նոսին յիշել եւ զտէր Աբրահամ զեպիսկոպոսն⁸, որում ըստ ձայնի⁹ խորհրդոյն¹⁰ եւ չհանգուցանէր ի ծերութեանս¹¹, եւ կարող լինէի առ նմա¹² գոնեա¹³ սուղ ինչ ժամանակ մնալ. թեպէտ եւ ոչ թերակատար փոլով սուրբ եւ ստոյգ¹⁴ հաւատ, զոր ուսեալ ի տղայութեանն յերանելոյ Աղանայ¹⁵՝ կեամ նովիմբ ի նմին անփոփոխութեամբ մինչեւ ի վախճան կենցաղոյս իմոյ. այլ յաղագս իմաստաւոր բանի, ըստ նորա տեառն մեծ հրահանգին, շահեալ ի նմանէն՝ հանգոյն մեծի գանձու ամփոփելոյ հաշուէի զպարապումն¹⁶ զայն¹⁷: 176 - Յորոյ վերայ տեսեալ պարեգաւտաւորաց զայրագնեալ իմն զարհեսելոյ տիկնոջ աւագի զմիտսն՝ ոչ ծանուցին առ ժամայն, նա աղաչելով¹⁸ զերանելի մայրն՝ հոգացեալ իբրեւ զեղբարս ի վերայ եղբար. այլ առաւելս զայրացուցեալ գրգռելով¹⁹՝ զկամացն իւրեանց նովաւ կատարեցին զհաճոյսն:

1 ՉՎԱտ. զտէր Նոյն (վերջակետով). այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

2 Ձ. դեռ եւ

3 Ատ. գինով

4 ՉՎ. եւ անյամենեցունց արգելի

5 ՏՏ. միւս թարգմանն

6 Վ. օրհնելոյն

7 Վ. արժանի եղաք

8 Վ. եպիսկոպոսն

9 ՏՏ. ըստ ձայնի. ԲԳտ. ենթադրում են ըղծայի. այսպէս ըստ ՉՎ., բայց իմաստը դարձեալ մնում է մույթ:

10 Վ. խորհրդոցն

11 ՉՏՏ. ի ծերութիւնս

12 Ձ. եւ առ նմա

13 Ատ. գոնեայ

14 Վ. թերակատար փոլով ոպ (պատուով) եւ ստոյգ

15 ՉՎԱտ. ալանայ

16 Վ. զգարարումն

17 ՉԱտ. զպարարումն զայն

18 Ձ. նայ աղաչելով. թերեւս՝ ոչ ցածուցին առ ժամայն, աղաչելով...

19 Ձ. գրգռելով